ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010

ք. Երևան «10» Հոկտեմբեր 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Եղիշե Գևորգյանի, որը գործում է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 (յոթ հարյուր երեսուն) օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 3 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 46647000 (քառասունվեց միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016	Հ/Հ 11500374479000
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Ե.Գևորգյան_____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
« 10 » Հոկտեմբեր 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ ՊԵԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չ.մ.	Քանակը	Միավորի արժեքը դրամ	Ընդամենը դրամ
1	2	3	4	5	6
	Վարչական շենք				
	Նկուղային հարկի համաշինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Հատակների կերամիկական ծածկույթի քանդում /ներառյալ ց/ա հարթ. շերտը/	քմ	105.00	439.44	46141.2
2	Բետոնյա և ցեմենտյա հարդեցուցիչ շերտերի քանդում 3սմ	խմ	4.00	19353.53	77414.12
3	Պատերի հախճասալերի քանդում սանհանգույցներում	քմ	345.00	604.82	208662.9
4	Պատերի ցեմենտյա սվաղի քանդում սանհանգույցներում	քմ	345.00	187.25	64601.25
5	Շին աղբի բարձում եվ տեղափոխում 7 կմ վրա	տն	34.00	3126.62	106305.08
	Հատակներ				
6	Սանհանգույցների թասերի հիմնատակերի իրականացում Բ15 բետոից	խմ	5.50	47142.83	259285.565
7	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստությամբ	քմ	105.00	1451.77	152435.85
8	Հատակի հիդրոմեկուսիչ մեկ շերտ իզոգամից	քմ	105.00	2642.34	277445.7
9	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից	քմ	105.00	7792.80	818244
10	Աստիճանների երեսապատում մարմարե սալիկներով /առանց նյութի արժեքի/	քմ	10.29	8433.29	86778.5541
	Հարդարման աշխատանքներ				
11	Պատերի սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	345.00	1802.47	621852.15
12	Պատերի երեսպատում հաղճասալիկներով	քմ	345.00	8595.52	2965454.4
13	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	121.00	1269.63	153625.23
14	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	57.0	1140.0	64982.28
	Բացվածքներ				
15	Մետաղապլաստե դռների փոխարինում	քմ	29.96	37185.59	1114080.276
	Սանտեխնիկական սարքավորումներ				

16	Հախճապակյա զուգարանակոնք ողողման բաքով	կ-տ	5	31982.58	159912.9
17	Զուգարանակոնք ասիական. լվացման բաքով	կ-տ	11	24865.69	273522.59
18	Հախճապակյա լվացարանի տեղադրում սիֆոնով	կ-տ	12	29995.24	359942.88
19	Ծորակ	կ-տ	12	5220.22	62642.64
	Ներքին ջրամատակարարման ցանց				
20	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=40 փորձարկումով	մ	6	2638.18	15829.08
21	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=32 փորձարկումով	մ	6	2511.04	15066.24
22	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=25. փորձարկումով	մ	2	1824.08	3648.16
23	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=20 փորձարկումով	մ	35	2112.16	73925.6
24	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=15 փորձարկումով	մ	45	2598.05	116912.25
25	փական Φ=15մմ	հատ	24	1515.26	36366.24
26	փական Φ=20մմ	հատ	6	1621.04	9726.24
27	փական Φ=25մմ	հատ	1	1876.92	1876.92
28	փական Φ=40մմ	հատ	1	5157.59	5157.59
29	փական Φ=75մմ	հատ	1	14294.87	14294.87
30	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	60	137.23	8233.8
31	Միացում գործող ջրագծին d=80մմ	տեղ	1	11726.2	11726.2
32	Ջրի զտիչ d=50մմ	հատ	1	12219.9	12219.9
	կոյուղու ներքին ցանց				
33	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=50մմ	մ	30	1644.54	49336.2
34	նույնը Φ=110մմ	մ	24	2959.17	71020.08
35	Կոյուղու ձևավոր մասեր d=50-100մմ պոլիէթիլենային խողովակն.համար	հատ	40	600.38	24015.2
36	Մաքրիչ d=100մմ	հատ	5	1230.79	6153.95
37	Ստուգիչ d=100մմ	հատ	5	1230.79	6153.95
	Էլեկտրականություն				
38	Մեկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	8	1542.94	12343.52
39	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	7	1788.71	12520.97
40	ՈՒԶՈ-16	հատ	4	22302.88	89211.52
41	Լեդ լուսատու. 8 վտ. 600 լմ. IP:65. չափսը՝ 160x90x45	հատ	32	7172.63	229524.16

42	Լեդ լուսատու. 12 վտ.900 լմ. IP:65. չափսը՝ Φ155x50	հատ	3	8173.27	24519.81
43	Մալուխ ՎՎԳ 3*2.5 խողովակում	գմ	140	643.4	90076
44	Մալուխ ՎՎԳ 3*1.5 խողովակում	գմ	250	420.4	105100
45	Φ20 ճկախողովակի տեղադրում	գմ	390	349.79	136418.1
46	Ձեռքերի չորացման սարք	հատ	4	20012.82	80051.28
	Վարչական շենք				
	Առաջին հարկի համաշինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Արտաքին դռների ապամոնտաժում	քմ	31.95	4339.1	138634.245
2	Հատակների կերամիկական ծածկույթի քանդում /ներառյալ ց/ա հարթ. շերտը/	քմ	6.78	439.44	2979.4032
3	Լինոլեումյան հատակի ծածկերի և շրիշակների քանդում	քմ	142.8	149.79	21390.012
4	Պատերի հախճասալերի քանդում սանհանգույցներում	քմ	35.41	604.82	21416.6762
5	Պատերի ցեմենտյա սվաղի քանդում սանհանգույցներում	քմ	35.41	187.25	6630.5225
6	Սյուների մարմարա սալիկների քնդում /մինչև +0.40 նիշ/	քմ	55.1	2846.62	156848.762
7	Սյուների ցեմենտյա սվաղի քանդում /մինչև +0.40 նիշ/	քմ	55.1	187.25	10317.475
8	Աստիճանավանդակի վնասված մարմարե սալիկների քանդում	քմ	10.29	439.44	4521.8376
9	Շին աղբի բարձում եվ տեղափոխում 7 կմ վրա	տն	8	3126.62	25012.96
	Հատակներ				
10	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստությամբ	քմ	6.78	1451.77	9843.0006
11	Հատակի հիդրոմեկուսիչ մեկ շերտ իզոգամից	քմ	6.78	2642.34	17915.0652
12	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից	քմ	6.78	7792.8	52835.184
13	Լինոլեումից հատկների իրականացում. շրիշակների տեղադրումով	քմ	142.8	3772.36	538693.008
	Հարդարման աշխատանքներ				
14	Պատերի սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	35.41	1802.47	63825.4627
15	Պատերի երեսպատում հաղճասալիկներով	քմ	35.41	8595.52	304367.3632
16	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1726	1140.04	1967367.028
17	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1132	1269.63	1437602.049
18	Սյուների սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	55.1	1802.47	99316.097
19	Սյուների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	55.1	1543.97	85072.747
	Բացվածքներ				
20	Ալյումինե ջերմակամուրջով դռների բլոկներ ապակեփաթեթով	քմ	31.95	79087.66	2526850.737

21	Մետաղապլաստե դռների փոխարինում	քմ	3.78	37185.59	140561.5302
22	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ	քմ	23.00	4955.29	113971.67
	Սանտեխնիկական սարքավորումներ				
23	Հախճապակյա զուգարանակոնք ողողման բաքով	կ-տ	2	31969.72	63939.44
24	Հախճապակյա լվացարանի տեղադրում սիֆոնով	կ-տ	2	29988.1	59976.2
25	Ծորակ	կ-տ	2	5220.22	10440.44
	Էլեկտրականություն				
26	Մեկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	20	1542.94	30858.8
27	Երկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	6	1900.32	11401.92
28	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	60	1788.71	107322.6
29	Լեդ լուսատու. 8 վտ. 600 լմ. IP:65. չափսը՝ 160x90x45	հատ	2	7172.63	14345.26
30	Լեդ լուսատու. 12 վտ.900 լմ. IP:65. չափսը՝ Φ155x50	հատ	103	8173.27	841846.81
31	Լեդ լուսատու. 36 վտ. 3200 լմ. IP:20. չափսը՝ 1200x75x25	հատ	33	8745.07	288587.31
32	Լեդ լուսատու. 12 վտ. 900 լմ. IP:65. չափսը՝ 160x90x45 /շվաքարան/	հատ	10	9316.86	93168.6
33	Լեդ լուսարձակ. 30 վտ. 2550 լմ. IP:65. չափսը՝ 180x175x45 /շվաքարան/	հատ	16	13748.27	219972.32
34	Մալուխատար 100x60	գմ	30	2510.84	75325.2
35	Մալուխատար 20x20	գմ	150	880.73	132109.5
36	Մալուխ ՎՎԳ 3*2.5 խողովակում	գմ	400	643.4	257360
37	Մալուխ ՎՎԳ 3*1.5 խողովակում	գմ	300	420.4	126120
	Վարչական շենք				
	Երկրորդ հարկի համաշինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Հատակների կերամիկական ծածկույթի քանդում /ներառյալ g/a հարթ. շերտը/	քմ	11.8	439.44	5185.392
2	Պատերի հախճասալերի քանդում սանհանգույցներում	քմ	47	604.82	28426.54
3	Պատերի ցեմենտյա սվաղի քանդում սանհանգույցներում	քմ	47	187.25	8800.75
4	Շին աղբի հավաքում և տեղափոխում բարձելու համար /մասնակի/	տն	4	1633.01	6532.04
5	Շին աղբի բարձում եվ տեղափոխում 7 կմ վրա	տն	4	3126.62	12506.48
	Հատակներ				
6	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստությամբ	քմ	11.8	1451.77	17130.886
7	Հատակի հիդրոմեկուսիչ մեկ շերտ իզոգամից	քմ	11.8	2642.34	31179.612
8	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից	քմ	11.8	7792.8	91955.04

	Հարդարման աշխատանքներ				
9	Պատերի սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	47	1802.47	84716.09
10	Պատերի երեսպատում հաղճասալիկներով	քմ	47	8595.52	403989.44
11	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	954	1140.04	1087598.16
12	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով /գմբեթը ներառյալ/	քմ	593	1269.63	752890.59
	Սանտեխնիկական սարքավորումներ				
13	Հախճապակյա զուգարանակոնք ողողման բաքով	կ-տ	3	31969.72	95909.16
14	Հախճապակյա լվացարանի տեղադրում սիֆոնով	կ-տ	3	29988.1	89964.3
15	Ծորակ	կ-տ	3	5220.22	15660.66
	Էլեկտրականություն				
16	Մեկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	11	1542.94	16972.34
17	Երկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	7	1900.32	13302.24
18	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	67	1788.71	119843.57
19	Լեդ լուսատու. 24վտ. չափսը՝ 30x30	հատ	35	8030.33	281061.55
20	Լեդ լուսատու. 8 վտ. 600 լմ. IP:65. չափսը՝ Φ155x50	հատ	6	7458.53	44751.18
21	Լեդ լուսատու. 12 վտ.900 լմ. IP:65. չափսը՝ Φ155x50	հատ	2	8173.27	16346.54
22	Լեդ լուսատու. 36 վտ. 3000 լմ. IP:40. չափսը՝ 60x60	հատ	12	13033.53	156402.36
	Արտաքին սանհանգույց				
	Կոնստրուկտորական մաս				
1	Մայթերի սալերի քանդում	քմ	24.5	385.07	9434.215
2	3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	խմ	16	2217.67	35482.72
3	Խճից շերտի պատրաստում	խմ	0.7	14175.33	9922.731
4	Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնով	խմ	1.14	44740.59	51004.2726
5	Ե/Բ հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնով	խմ	1.52	56858.18	86424.4336
6	Ամրան A500c Φ12	տն	0.028	492872.94	13800.44232
7	Ամրան AcI	տն	0.014	505080.77	7071.13078
8	Միջնորմների հիմքերի իրականացում B-15 դասի բետոնից	խմ	0.7	54793.26	38355.282
9	Հիմքերի ջրամեկուսացում իզոգամով	քմ	13.3	3404.37	45278.121
10	Պատերի իրականացում բետոնե 100 մմ բլոկներով	քմ	26	3554.79	92424.54
11	Պատերի իրականացում բետոնե 200մմ SPLIT բլոկներով	խմ	5.274	50467.51	266165.6477
12	Անցքերի լցափակում B-12.5 դասի բետոնով	խմ	0.825	41916.59	34581.18675

13	Միջնորմների ամրանավորում	տն	0.09	553237.85	49791.4065
14	Միաձույլ ե/բ միջուկների իրականացում B-20 դասի բետոնից	խմ	0.48	84346.88	40486.5024
15	Ամրան A500c Φ12	տն	0.077	492744.29	38158.11782
16	Ամրան AcI	տն	0.04	505037.88	20091.61896
17	Միաձույլ ե/բ գոտիների իրականացում B-20 դասի բետոնից	խմ	0.38	74035.79	28133.6002
18	Ամրան A500c	տն	0.046	495245.89	22771.40602
19	Ամրան AcI	տն	0.02	505037.88	10100.7576
20	Տանիքի իրականացում սենդվիչ պանելից 40մմ	քմ	20.8	8883.86	184784.288
	Հատակներ				
21	Սանհանգույցների թասերի հիմնատակերի իրականացում բետոից	խմ	0.6	47142.83	28285.698
22	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստությամբ	քմ	19.5	1451.77	28309.515
23	Հատակի հիդրոմեկուսիչ մեկ շերտ իզոգամից	քմ	19.5	2642.34	51525.63
24	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից 330x330մմ	քմ	19.5	7792.8	151959.6
25	Ավազի շերտի իրականացում սալիկների տակ 50մմ	խմ	1.225	8069.1	9884.6475
26	Մայթերի սալիկների տեղադրում /առանց նյութի արժեքի/	քմ	24.5	845.25	20708.625
	Հարդարման աշխատանքներ				
27	Կախովի առաստաղների երեսապատում պլաստմասե շերտաձողերով	քմ	19.5	4005.14	78100.23
28	Պատերի սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	110	1802.47	198271.7
29	Պատերի երեսպատում հաղճասալիկներով	քմ	89	8531.07	759265.23
	Բացվածքներ				
30	Մետաղապլաստե դռների տեղադրում	քմ	6.09	37185.59	226460.2431
31	Այլումինե ջերմակամրջակով դռների տեղադրում	քմ	3.78	79100.66	299000.4948
32	Այլումինե ջերմակամրջակով պատուհանների տեղադրում	քմ	0.48	73898.23	35471.1504
	Սանտեխնիկական սարքավորումներ				
33	Հախճապակյա միզարանի տեղադրում խառնիչով	կ-տ	2	20330.54	40661.08
34	Հախճապակյա զուգարանակոնք ողողման բաքով	կ-տ	2	31969.72	63939.44
35	Զուգարանակոնք ասիական. լվացման բաքով	կ-տ	2	24857.12	49714.24
36	Հախճապակյա լվացարանի տեղադրում սիֆոնով	կ-տ	3	29988.1	89964.3
37	Ծորակ	կ-տ	3	5220.22	15660.66
	Ներքին ջրամատակարարման ցանց				
38	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=40 փորձարկումով	մ	10	2635.48	26354.8

39	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=25. փորձարկումով	մ	20	1824.08	36481.6
40	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=20 փորձարկումով	մ	6	2112.16	12672.96
41	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=15 փորձարկումով	մ	4	2598.05	10392.2
42	փական Φ=15մմ	հատ	1	1515.26	1515.26
43	փական Φ=25մմ	հատ	9	1876.92	16892.28
44	փական Φ=40մմ	հատ	1	5157.59	5157.59
45	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	15	137.23	2058.45
46	Միացում գործող ջրագծին	տեղ	1	11726.2	11726.2
47	Ջրի զտիչ d=50մմ	հատ	1	12219.9	12219.9
	Կոյուղու ներքին ցանց				
48	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=50մմ պատերին	մ	10	1644.54	16445.4
49	նույնը Φ=110մմ	մ	11	2959.17	32550.87
50	Կոյուղու ձևավոր մասեր d=50-100մմ պոլիէթիլենային խողովակն.համար	հատ	20	600.38	12007.6
51	Մաքրիչ d=100մմ	հատ	1	1230.79	1230.79
52	Ստուգիչ d=100մմ	հատ	1	1230.79	1230.79
53	Արտաքին կոյուղագծին միացող պոլիէթիլենային կոյուղու խողովակ Φ110	մ	13.5	2399.54	32393.79
54	Միացում գործող կոյուղագծին	տեղ	1	21082.72	21082.72
	Ջեռուցում				
55	Հարթ ջեռուցիչ մարտկոցների տեղադրում /1ԷԿՄ=0.568 կՎտ/	կվտ	4.2	951.07	3994.494
56	Հարթ ջեռուցիչ մարտկոցի արժեքը. h=405 մմ. L=605 մմ	հատ	3	28589.75	85769.25
57	Պոլիպրոպիլենային խողովակ Φ20. ներառյալ ձևավոր մասերը	գմ	30	2490.16	74704.8
58	Մարտկոցի թերմոստատիկ փական Φ20.	հատ	3	4407.65	13222.95
59	Մարտկոցի կարգավորիչ փական Φ20.	հատ	3	3654.31	10962.93
60	Դատարկման փական Φ20.	հատ	3	2302.9	6908.7
61	Ավտոմատ օդահան Φ20.	հատ	3	2464.19	7392.57
	Օդափոխություն				
62	Առանձքային օդամղիչի տեղադրում	կ-տ	1	39462.21	39462.21
63	Ճկուն օդատար Φ100.	գմ	20	1147.88	22957.6
64	Ճաղավանդակ	հատ	6	4713.59	28281.54
	Էլեկտրականություն				
65	Մեկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	3	1542.94	4628.82

66	Լեդ լուսատու. 8 վտ. 600 լմ. IP:65. չափսը՝ 160x90x45	հատ	8	7172.63	57381.04
67	Ավտոմատ անջատիչ միֆազ 16Ա	հատ	1	3157.95	3157.95
68	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	2	1788.71	3577.42
69	Ձեռքերի չորացման սարք	հատ	4	20012.82	80051.28
70	Մալուխ ՎՎԳ 3*2.5 խողովակում	գմ	25	643.4	16085
71	Մալուխ ՎՎԳ 3*1.5 խողովակում	գմ	50	420.4	21020
72	Փ20 ճկախողովակի տեղադրում	գմ	75	349.79	26234.25
	Կշռատան վերանորոգում				
	Քանդման աշխատանքներ				
1	Լինոլեումյան հատակի ծածկերի և շրիշակների քանդում	քմ	16.8	149.79	2516.472
	Հատակներ				
2	Լինոլելումից հաակների իրականացում. շրիշակների տեղադրումով	քմ	16.8	3772.36	63375.648
	Հարդարման աշխատանքներ				
3	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	39.56	1140.04	45099.9824
4	Առաստաղի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	16.8	1269.63	21329.784
	Էլեկտրականություն				
5	Երկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	1	1908.38	1908.38
6	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	3	1788.71	5366.13
	Անցակետի սենյակների վերանորոգում				
	Աշխատասենյակներ				
1	Փայտից դռների և պատուհանների ներկում 2 տակ	քմ	5.674	1211.71	6874.757856
2	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	61.02	1140.04	69565.2408
3	Առաստաղի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	15.81	1269.63	20072.8503
	Միջանցք				
4	Լինոլեումյան հատակի ծածկերի և շրիշակների քանդում	քմ	8.1	149.79	1213.299
5	Փայտից պատուհանների ներկում 2 տակ	քմ	1.23	1211.71	1490.160958
6	Լինոլումից հատակների իրականացում. ներառյալ շրիշակները	քմ	8.1	4044.84	32763.204
7	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	34.04	1140.04	38808.32965
8	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկոն	քմ	8.1	1269.63	10284.003
	Էլեկտրականություն				
9	Լեդ լուսատու. 12 վտ.900 լմ. IP:65. չափսը՝ Փ155x50	հատ	6	8173.27	49039.62

10	Մեկստեղ անջատիչ բաժանիչ տուփով	հատ	3	1551.01	4653.03
11	Խրոցակի վարդակ բաժանիչ տուփով	հատ	8	1788.71	14309.68
	Տրանսֆորմատորային ենթակայանի սարքավորումների արդիականացում եվ ցածր լարման էլ.սնուցման օդային գիծ				
1	0.4 կվ Հիմնական բաշխիչ և ՊԻՄ վահանակ. բաղկացած՝ Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա-4 հատ MCCB տիպի ավտոմատ անջատիչ եռաֆազ 160Ա-3 հատ Հոսանքի ՊԻՄ համակարգ 250 Ա-3 հատ	կ-տ	1	1673827.91	1673827.91
2	Մետաղական արկղ 500*400*170 48 մոդուլի համար	կ-տ	1	29088.04	29088.04
3	Բախշման վահանում MCCB տիպի ավտոմատ անջատիչ եռաֆազ 160Ա	հատ	1	44213.34	44213.34
4	Բախշման վահանում MCCB տիպի ավտոմատ անջատիչ եռաֆազ 100Ա	հատ	2	26877.02	53754.04
5	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա բախշիչ վահանում	հատ	2	5695.28	11390.56
6	Մետաղական արկղ 400*300*150 12 տեղ	կ-տ	3	22277.58	66832.74
7	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա բախշիչ վահանում	հատ	3	5695.28	17085.84
8	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 25Ա բախշիչ վահանում	հատ	3	5014.24	15042.72
9	Ավտոմատ անջատիչ միֆազ 25Ա բախշիչ վահանում	հատ	9	3472.43	31251.87
10	Ավտոմատ անջատիչ միֆազ 16Ա բախշիչ վահանում	հատ	9	3472.43	31251.87
11	Ձգաժապավեն խամութի X 12 տեղադրում	հատ	40	2465.49	98619.6
12	ՎՎԳ 5x6 քմմ մալուխի անցկացում ճոպանի միջոցով /պահակակետերի սնուցում/	մ	500	1980.86	990430
13	Մետաղաճոպանի արժեքը-D=6մմ	մ	500	352.85	176425
14	Գոյություն ունեցող մալուխի անցկացում ճոպանի միջոցով /ենթակայանից դեպի մուտքի անցակետ և կաթսայատուն/	մ	120	522.78	62733.6
15	Մետաղաճոպանի արժեքը-D=6մմ	մ	120	352.85	42342
16	ՎՎԳ 5x6 քմմ մալուխի անցկացում ճոպանի միջոցով /հիմնական մասնաշենքից կշեռքի սնուցման համար/	մ	100	1986.3	198630
17	Մետաղաճոպանի արժեքը-D=6մմ	մ	100	352.85	35285
18	Գոյություն ունեցող մալուխի անցկացում գոֆռաի միջով. հենակների վրա /ճառագայթման ստուգման սարք. համար/	մ	100	823.06	82306
19	ԱՎՎԳ 4x95 քմմ մալուխի տեղադրում ճոպանի միջոցով /հիմնական մասնաշենքի սնուցում/	մ	270	4399.65	1187905.5
20	Մետաղաճոպանի արժեքը-D=6մմ	մ	270	352.85	95269.5

21	Մալուխի ծայրակալ 95 մմ2	հատ	8	357.37	2858.96
	Տարածքի լուսավորություն				
1	Մետաղական կախովի արկղ 500*400*170 48 մոդուլի համար	կ-տ	1	29088.04	29088.04
2	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա	հատ	1	5863.77	5863.77
3	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 25Ա	հատ	3	5149.03	15447.09
4	Կոնտակտոր եռաֆազ 25Ա	հատ	3	3719.54	11158.62
5	Թայմեր	հատ	1	4330.7	4330.7
6	Գոյություն ունեցող մետաղական հենասյուների վերատեղադրում	հատ	39	10317.27	402373.53
7	Նոր մետաղական հենասյուների մոնտաժում 102x4-9մ	հատ	5	55212.14	276060.7
8	Բարձակների տեղադրում. մեկ ճուղանի Փ-50մմ Լ-1.5մ /խողովակ/	հատ	5	17259.98	86299.9
9	Նոր մետաղական հենասյուների հենակ/գիլզա/ 133x4.0-1մ	հատ	34	7161.73	243498.82
10	Գոյություն ունեցող ե/բ հենասյուների ամրացում	հատ	6	11823.72	70942.32
11	3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	խմ	31.59	2217.67	70056.1953
12	Մետաղական սյուների բետոնացում B-12.5 բետոնից	խմ	9.75	41962.69	409136.2275
13	Ձգաժապավեն խամութ	հատ	90	786.22	70759.8
14	Սեղմակներ կԸ-1.	հատ	14	1186.47	16610.58
15	ТՒ - 20 մեկուսիչներ գլխադիրներով	հատ	120	800.51	96061.2
16	IP 65 բաշխման տուփ 110x110x75	հատ	80	2138.31	171064.8
17	Արտաքին լուսատու 35 վտ. 3400 լմ. IP: 65.	հատ	62	35707.39	2213858.18
18	ՎՎԳ 5x4 քմմ մալուխի տեղադրում ճոպանի միջոցով	մ	900	1662.09	1495881
19	ՎՎԳ 5x2.5 քմմ մալուխի տեղադրում ճոպանի միջոցով	մ	600	1459.42	875652
20	Մետաղաճոպանի արժեքը-D=6մմ	մ	1500	352.85	529275
21	ՎՎԳ 3x1.5քմմ մալուխի տեղադրում լիցքավորման համար	մ	90	1498.1	134829
22	Պողպատյա խողովակների յուղաներկում 2 անգամ	քմ	216	879.91	190060.56
	Բարձրավոլտ 6 կվ էլ. օդային գծեր				
1	Գոյություն ունեցող հեծանի ամրացում	հատ	1	11823.72	11823.72
	Ընդամենը				39349626.87
	Շահույթ		11%		4328458.96
	Ընդամենը				**43678085.83**
	ԱԱՀ		20%		8735617.17

	Ընդամենը				**52413703.00**

Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ սյունիքի մարզ, գ. Կարճևան, Մայրուղի 4 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 11500374479000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
տնօրեն

Ե.Գևորգյան_____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված 2
«10» Հոկտեմբեր 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀՀ ՊԵԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը*	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ՊԵԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:	Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 11500374479000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
տնօրեն

Ե.Գևորգյան_____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված N 3
«10» Հոկտեմբեր 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով պայմանագրի

ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի վերանորոգման ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երկու տարի				
Հ.հ.	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. բնութագիր	Երաշխիքա-յին ժամկետ
1.	Բետոն	խմ	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	2 տարի
2.	Սենդվիչ պանել	քմ	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	2 տարի
3.	Պլաստմասայե կախովի առաստաղ	քմ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
4.	Հատակի կերամիկական սալիկներ	քմ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
5.	Հախճասալ	քմ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
6.	Լատեքսային ներկ	կգ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
7.	Մետաղապլաստե դռան բլոկ	քմ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
8.	Այլումինե ջերմակամուրջով դռների բլոկներ	քմ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
9.	Կերամիկական միզարան	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
10.	Կերամիկական զուգարանակոնք	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
11.	Կերամիկական լվացարան	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
12.	Լվացարանի ծորակ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
13.	Ցնցուղի ծորակ-խառնիչ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
14.	Պղնձե մալուխ ՎՎԳ 3*2.5	գ/մ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
15.	Պղնձե մալուխ ՎՎԳ 3*1.5	գ/մ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
16.	Պղնձե մալուխ ՎՎԳ 5*6	գ/մ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
17.	Այլումինե մալուխ ԱՎՎԳ 4*95	գ/մ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
18.	Լեդ լուսատու 8վտ, 600լմ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
19.	Լեդ լուսատու 12վտ, 900լմ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի

20.	Լեդ լուսատու .36վտ, 3200լմ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
21.	Լեդ լուսարձակ .36վտ, 2550լմ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի
22.	Լեդ լուսարձակ .35վտ, 3400լմ	հատ	Բարձրորակ եվրոպական արտադրության կամ համարժեք	2 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 11500374479000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
տնօրեն

Ե.Գևորգյան_____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված թիվ 4
«_10_» Հոկտեմբեր 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«10» Հոկտեմբեր 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն